«2021Թ. ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՊԱՐԲԵՐԱՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼ

«2021թ. ՀՀ լավագույն հաշվապահ» անվանակարգում հայտարարված մրցույթի 12-րդ պարբերաշրջանի ընտրական 3-րդ փուլին ներկայացվում է մեկ հարցաշար և մեկ խնդիր:

Հարցաշարը բաղկացած է 10 հարցից: Հարցաշարի ճիշտ պատասխանները գնահատվում են 2-ական միավոր, սխալ պատասխանները՝ 0 միավոր: Հարցաշարի առավելագույն միավորը կազմում է 20 միավոր:

Խնդիրը բաղկացած է 1 հարցից: Հարցի ճիշտ պատասխանը գնահատվում է 10 միավոր, սխալ պատասխանը՝ 0 միավոր:

Հարցաշարի և խնդրի ընդհանուր միավորների առավելագույն թիվը կազմում է 30 միավոր:

Երրորդ փուլին ներկայացված հարցաշարից և խնդրից առավել բարձր միավոր հավաքած մասնակիցների անունը, ազգանունը, միավորների թիվը (աճման կարգով) կտպագրվի ամսագրի հաջորդ համարներում, որպեսզի յուրաքանչյուր ընթերցող նույնպես մասնակիցը դառնա հաղթողի որոշման գործընթացին:

Երրորդ փուլի առաջադրանքների պատասխաններն ուղարկել **press@gortsq.am** էլեկտրոնային հասցեին մինչև 2021թ. օգոստոսի 1-ը: Առաջադրանքների ճիշտ պատասխանները կտեղադրվեն **www.gortsq.am** կայքէջում՝ 2021թ. օգոստոսի 2-ին:

ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ **–** Մրցանակաբաշխությունը, պատվոգիրը, հաշվապահական հաշվառման միջազգային խորհրդանիշով ոսկե եզր շքանշանը, անակնկալ հուշանվերը և վկայական հանձնելու արարողությունը տեղի կունենա 2022 թվականի փետրվարին՝ Ծաղկաձորում:

«2021Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ» ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼԻ ՀԱՐՑԱՇԱՐԸ

Հարց 1. Որքան է կազմում շահութահարկի եռամսյակային կանխավճարների գումար

Ա. Նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող գումարի և նախորդ եռամսյակի ընթացքում ստացվող եկամուտների երկու տոկոսով հաշվարկվող գումարի նվազագույնի չափով,

Բ. Նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող գումարի և նախորդ եռամսյակի ընթացքում ստացվող եկամուտների երկու տոկոսով հաշվարկվող գումարի առավելագույնի չափով,

Գ. Նախորդ հարկային տարվա շահութահարկի գումարի 20 տոկոսով հաշվարկվող գումարի չափով:

Հարց 2 .Ֆիզիկական անձի կողմից արտադրական նշանակության հողի օտարումը հարկվում է

Ա. Իրացման գնի 10 տոկոսի չափով, բայց ոչ պակաս կադաստրային արժեքի 10 տոկոսից,

Բ. Իրացման գնի 20 տոկոսի չափով, բայց ոչ պակաս կադաստրային արժեքի 20 տոկոսից,

Գ. Համարվում է նվազեցվող եկամուտ:

Հարց 3. Եթե ԱՁ-ի 2012թ.-ի իրացումից հասույթը կազմել է 62 մլն դրամ, 2013թ.-ին ԱՁ-ն հաշվառումից հանվել է և կրկին հաշվառվել է 2021թ.-ին, ապա պարտավոր է արդյոք ՀԴՄ կտրոնը

պարունակել 381 հոդվածի 3-րդ մասի 8-րդ կետով սահմանված տեղեկատվությունը: (ճիշտ պատասխանը կնդունվի հիմնավորման դեպքում):

Ա. Այո,

Բ. ՈՉ:

Հարց 4. Ինչպես պետք է վարվի կազմակերպությունը, եթե, օրինակ, ակտիվների որևէ տեսակի վերաբերյալ հաշվապահական հաշվառման ստանդարտներում հաշվառման մոտեցումներ ներկայացված չեն.

ա. որպես հիմք ընդունի հարկային օրենսդրությունը,

բ. իր հաշվետվություններում չճանաչի այդ ակտիվները՝ այդ մասին բացահայտելով ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում,

գ. առաջնորդվի նախկին համակարգում գործող նորմերով,

դ. առաջնորդվի նման և կապակցված հարցերին առնչվող հաշվապահական հաշվառման ստանդարտներով:

Հարց 5. ֆինանսական արդյունքների մասին հաշվետվությունում ինչպես պետք է դասակարգվեն կազմակերպության կողմից կատարված ծախսերը.

ա. ծախսերը պետք է դասակարգվեն ըստ դրանց բնույթի (օրինակ՝ աշխատավարձի գծով ծախսումներ, ամորտիզացիայի ծախսումներ, օգտագործված հումք և նյութեր և այլն)

բ. ծախսերը պետք է դասակարգվեն ըստ գործառույթի (օրինակ՝ վաճառված արտադ-րանքի (ապրանքների) ինքնարժեք, իրացման ծախսեր, վարչական ծախսեր և այլն)

գ. ծախսերը կարող են դասակարգվել ինչպես ըստ բնույթի, այնպես էլ ըստ գործառույթի

Հարց 6. Համաձայն ՀՀՄՍ 1 "Ֆինանսական հաշվետվությունների ներկայացում" ստանդարտի՝

Ա. կազմակերպությունը կարող է ինքնուրույն որոշել՝ կիրառել, թե ոչ հաշվապահական հաշվառման ստանդարտների կոնկրետ պահանջները՝ այդ մասին բացահայտելով հաշվապահական հաշվառման քաղաքականության մեջ,

Բ. կազմակերպությունը կարող է ինքնուրույն որոշել՝ կիրառել, թե ոչ հաշվապահական հաշվառման ստանդարտների կոնկրետ պահանջները՝ այդ մասին բացահայտելով ֆինանսական հաշվետվություններին կից ծանոթագրություններում,

Գ. հաշվապահական հաշվառման ստանդարտների կոնկրետ պահանջների սխալ կիրառումը չի ուղղվում լրացուցիչ բացահայտումներով,

Դ. հաշվապահական հաշվառման ստանդարտների կոնկրետ պահանջները չպետք է կիրառվեն, եթե դրանք հակասում են հարկային օրենսդրությանը:

Հարց 7. Համաձայն ՀՀՄՍ 2 "Պաշարներ" ստանդարտի, նշված ակտիվներից որը չի դասակարգվի որպես պաշար.

Ա. անավարտ արտադրանքը, որը նախատեսվում է ավարտուն վիճակի հասցնել հաշվետու ամսաթվից հետո ավելի քան մեկ տարվա ընթացքում,

Բ. այն ակտիվները, որոնք արտահայտված են նյութերի և արագամաշ առարկաների ձևով արտադրանքի թողարկման կամ ծառայություններ մատուցելու ընթացքում օգտագործելու համար,

Գ. այն առարկաները, որոնց գումարը էական չէ և որոնք նախատեսվում է օգտագործել ավելի քան մեկ տարվա ընթացքում,

Դ. այն ակտիվները, որոնք պահվում են սովորական գործունեության ընթացքում վաճառքի համար:

Հարց 8. Մոտ ապագայում օտարման նպատակով պահվող երկարաժամկետ պարտատոմսերի ձեռք բերման արտացոլում.

Ա. Դեբետ 143

Կրեդիտ 252

Բ. Դեբետ 231

Կրեդիտ 252

Գ. Դեբետ 145

Կրեդիտ 252

Հարց 9. Շահագործման մեջ գտնվող արագամաշ առարկաների լուծարման արտացոլում.

Ա. Դեբետ 713

Կրեդիտ 213

Բ. Կրեդիտ 947

Գ. Դեբետ 714

Կրեդիտ 213

Հարց 10. Շենքի կառուցման համար օգտագործելու պայմանով որպես շնորհ ստացված նյութերի մուտքագրում.

Ա. Դեբետ 211

Կրեդիտ 614

Բ. Դեբետ 211

Կրեդիտ 421

Գ. Դեբետ 211

Կրեդիտ 541

«2021Թ.ՀՀ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՀԱՇՎԱՊԱՀ»
ՄՐՑՈՒՅԹԻ 12-ՐԴ ՇՐՋԱՆԻ ԸՆՏՐԱԿԱՆ III ՓՈՒԼԻ
ԽՆԴԻՐԸ

ԱԲԳ ընկերությունը հիմնադրվել է 2020թ.-ի 02.04.2020թ.-ին: Զբաղվել է բացառապես կերամիկայի արտադրությամբ և ստեղծման օրվանից բացառապես գործել է հարկման ընդհանուր դաշտում: 2020թ.-ի հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է հետևյալ գործարքներ ը՝

եկամուտներ հազ. դրամ

Հ/Հ	Գործարք	Գումար
1	Մանրածախիրացում /ներառյալ ԱԱՀ/	24 000
2	Մեծածախիրացում	12 000
3	Վարձակալությունիցեկամուտ	7 000
4	Տոկոսայինեկատներ	4 200
5	Ստացվածանտոկոսփոխառությունհիմնադրից	1 300
	Ընդամենը	48 500

ծախսեր

Հ/Հ	Գործարք	Գումար
1	Իրացվածարտադրանքիինքնարժեք	28 000
2	Տեխնիկականկորուստ	2 000
3	Աշխատավարձ	6 800
4	Աշխատողներիհամարբնակարանիվարձակալություն	1200
5	ՀՄ մաշվածություն	4500
	Ընդամենը	42 500

Լրացուցիչ տեղեկություն՝

1. Հետագայում պարզվել է, որ մանրածախ վաճառքի 10 տոկոսը եղել է ԱԱՀ-ից ազատված գործարքներ, սակայն ՀԴՄ կտրոնի վրա նշվել է ԱԱՀ:
2. Պայմանավորված կորանավիրուսային համավարակով, աշխատողները աշխատանքի չեն ներկայացել սակայն ստացել են 800 հազ. դրամ աշխատավարձ:
3. Աշխատողների համար նախատեսված բնակարանների վարձակալության մասով աշխատողների աշխատանքային պայմանագրով ոչինչ սահմանված չէ:

Որոշել 2020թ.-ի համավճարման ենթակա շահութահարկի գումարը կամ հարկային վնասի չափը:

Խ Ն Դ Ի Ր

ԱԲԳ ընկերությունը հիմնադրվել է 2020թ.-ի 02.04.2020թ.-ին: Զբաղվել է բացառապես կերամիկայի արտադրությամբ և ստեղծման օրվանից բացառապես գործել է հարկման ընդհանուր դաշտում: 2020թ.-ի հաշվետու տարվա ընթացքում իրականացրել է հետևյալ գործարքներ՝

եկամուտներ հազ. դրամ

Հ/Հ	Գործարք	Գումար	Գումար
1	Մանրածախ իրացում /ներառյալ ԱԱՀ/	24 000	20 000
2	Մեծածախ իրացում	12 000	12 000
3	Վարձակալությունից եկամուտ	7 000	7 000
4	Տոկոսային եկատներ	4 200	4 200
5	Ստացված անտոկոս փոխառություն հիմնադրից	1 300	-
	Ընդամենը	***48 900***	***43 200***

ծախսեր

Հ/Հ	Գործարք	Գումար	Գումար
1	Իրացված արտադրանքի ինքնարժեք	28 000	28000
2	Տեխնիկական կորուստ	2 000	2000
3	Աշխատավարձ	6 800	6800
4	Աշխատողների համար բնակարանի վարձակալություն	1200	-
5	ՀՄ մաշվածություն	4500	4500
6	Համավարակի մասով ստացված գումար	800	-
	Ընդամենը	***43 300***	***41 300***

Որոշել 2020թ.-ի համար վճարման ենթակա շահութահարկի գումարը կամ հարկային վնասի չափը:

Պատասխան՝ (43 200-41 300)*0,18= 342